



ՀԱՏՈՐ Ի՛՛՛՛

1889

ԾԳՈՍՏՈՍ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ԼՈՒԾՈՒԾՆ ԲԱՆԱԲԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՐԵԱՆ
ԿԱՄ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ, ՀԱՆԴԵՐԶ ՎԱԻԵՐԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ
ԸՆԴԱՐԶԱԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Ս. ՄԵՍՐՈՎԲՈՑ



(Շարունակութիւն և վերջ)



ՐԴ ԿՈՐԵԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆ և ՄՈՎՍԻՍԻ ՀԱՅՐԵՑ ԿԱՄ,
մութեան մէջ կատարեալ համաձայնութիւնն ըլլալով
յայտնի և անժխտելի մի ճշմարտութիւն, այժմ կը
մնայ ըսել, թէ կամ այդ Ս. Մեսրոպայ ընդարձակ
պատմութիւնն ստուգիւ ԿՈՐԵԱՆ Է և Մ. Խորենացի
անտի փոխ առած է. և կամ ընդհակառակն ըսել, թէ յետնագոյն ոմն
քաղերով այդ տեղեկութիւններն և պատմական անուանքն 'ի Մովսիսէ
և Ներսիսի իջնել ԿՈՐԵԱՆ համառօտ պատմութեան մէջ, ընդարձակը
ձևացուցեր է. Սակայն Մ. Խորենացի ինքնին այդ վերջին ենթադրու-
թեան հերքումը կու տայ իւր Գ. դրոց կէ գլխոյն մէջ, ուր Ս. Մես-
րոպայ նշարաց փոխադրութեան վրայ խօսելով այսպէս կ'ըսէ.
« Որպէս լուայ 'ի հաշտարիմ արանց, եթէ եկաց լոյս շողապէս ընդ
ազօտ նշան խաչին 'ի վերայ տանն, ուր երանելին զհոգին աւանդեաց ».
Արդ ո՞ այլ ոք հաւատարիմքան զգրանչելին կ'որիւն, որ ընդարձակ
պատմութեան 27 էջին մէջ կը գրէ տարբեր բանիք. « Եւ մինչդեռ
ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ նքանելի խաչաւ ».

նման յուշաւոր շողաւոր ձև երևէր 'ի վերայ ապարանիցն, յորում՝ երանելին վախճանէր: Բայց աստի ուրիշ հատուածներ ևս կը գտնենք առ Մովսիսի, որոնք կորիւնէն փոխ առնուած են. օրինակ իմն, կՈՒ զլխուն վերջի երկու պարբերութիւնքն, ուր թարգմանիչք Յունաստանէն կը վերադառնան 'ի Հայս՝ բերելով զկանոնս Ս. Ժողովոյն Եփեսոսի և զՍ. Գիրս: Արդ նոյն համաձայնութիւնը կը տեսնենք դարձեալ այդ ընդարձակ պատմութեան և ընդ պատմագրութեան Ղազարայ. ուրեմն նորա հարազատութիւնն այլ ևս տարակոյս չի վերցնէր: Բայց միայն ուրեք ուրեք ընդօրինակողաց ձեռքով բառեր խանգարուած են, և հաւանական է որ Կոստոսի գիշատիչ ժանիքներէն կարևոր տեղեաց և մասին ինչ յապաւմունք ևս տեղի ունեցած լինին անդ՝ քան թէ նոր յաւելուածներ:

Այս ապահով և հաստատուն հիման վերայ յեցած՝ գտնք այժմ լուծել բանաբազուկեան խնդիրն, յորմէ կը կախուի Ագաթանգեղայ Բ գրոց արժէքն: Արդ թէ Ագաթանգեղայ գրոց հեղինակն և թէ կորիւն՝ իրենց գործոց Բառաշաքաններուն մէջ կը ծանուցանեն, թէ 'ի բարձրագոյն հրամանաց շարժեալ եկին 'ի մատենադրել արանց առաքինեաց պատմութիւնը, ըստ բացատրութեան կորեան, « Կա. մակարագոյնս նուեղով զհամատարած ալեօքն Վարդապետական ճովոռն »: Իսկ ըստ կենսագրին Գրիգորի, « մատենադրաց ճովոռն անցեալ իրաց մատենադրել յայտնական պատմութիւն »: Երկրորեան իսկ իրենց վերջաբանութեանց մէջ կը յայտարարեն, թէ « Ոչ եթէ 'ի հին համբաւուց տեղեկացեալ » գրեցին իրենց պատմութիւնը, « այլ որոց ականատեսն իսկ եղեն կերպարանաց և առնթերակայ հոգևոր գործոցն »:

Կարելի էր և դիւրահասկանալի որ երկու հեղինակութեանց ըսածն ևս ճշմարիտ ըլլար, եթէ իրարմէ ամենևին անկախ գրութիւններ լինէին. բայց որովհետև վերոյիշեալ բազմաթիւ տեղեաց նմանութիւնը բառ առ բառ է և անժխտելի, ուրեմն պէտք է որ միոյն ասացածը կասկածելի լինի: Իսկ որովհետև կորեան ճշմարտութեան թուր գրութեանը մէջ կ'արտափայլէ, այնու իսկ, զի նորա երկա. սիրութեան մէջ վերոյիշեալ հատուածները միայնով կ'ընթանան՝ և առանց ինչ կրկնութեան և հակասութեան զիրար կ'ընդգրկեն: Երկրորդ, նորա պատմութեան նիւթը, դիւցազունը, ժամանակն և պարագայը՝ նոյն դարուն ուրիշ հեղինակներէն իսկ մեզի ծանօթ են, ինչպէս տեսանք քիչ առաջ, նոցա հետ լաւ կը միաբանեն. ուրեմն չիցէ ուղիւ աստի եզրակացնել, թէ Ագաթանգեղայ գրոց հեղինակն է ստուգը: Այս հետևութիւնն է ճշգրիտ լուսանկար Գուշապի կարծեաց, և ստուգիւ անմիջապէս համարելու էինք, եթէ մի այլ մեծագոյն և բազմակնճիւռ գաղտնիք այդ նմանաձայն հատուածոց մէջ գոյութիւն չ'ունենար: Ուստի ես իրագէտ և հետամուտ

գողով այդ գաղտնեացը՝ այլազգ կը դատեմ իրաց վիճակը: — Արդ ուշի ուշով քննելով այդ հատուածներն, երեք բաներ ակնյայտնի կը տեսնուին յայնս. Ա. կան բաներ՝ որ կորեան պատմութեան դիւցազանց մի միայն կը յարմարին. Բ. կան բաներ, որ Ագաթանգեղոյ գրոց դիւցազանց և նոցա ժամանակին միայն քաջ կը պատշաճին. Գ. կան դարձեալ ուրիշ բաներ, որոնք թէ՛ Տրդատայ, Գրիգորի և նոցա ժամանակ հանդիպած իրաց համար կարեն հասկացուիլ և թէ՛ միանգամայն Մեսրոփայ, Սահակայ և առ նորգը կատարուած իրաց: Մէջ բերենք առ այս հետեւեալ օրինակները: Յէջ 637 յԱգաթանգեղ Լուսաւորչոյ համար կ'ըսուի. « Սա եկեալ երևեալ Ռայերէկախօս գտաւ (տի տօն Αρμενιων γλωττη) . նոյնը կ'ըսուի նոյնպէս և առ Կորեան յէջ 13, սրբոյն Սահակայ և Մեսրոփոյ համար, բայց յաւելուածովս՝ « ի ձեռն երկուց Ռաւաւարեւոյց »: Արդ այս բանս առ Կորեան շատ լուր կը պատշաճի, զի խօսքը հայերէն նշանագրոց գիւտի և նորա վարդապետութեան վրայ է. իսկ առ Ագաթանգեղ՝ տարա, կուսելի, որովհետեւ 'ի ստնդիական հասակէն յոյն ընտանեաց մէջ սնած և ուսած Գրիգորը գծուար է, որ յանկարծակի հայերէն քարոզած ըլլար: Առ Կորեան յէջ 14 կ'ըսուի, թէ երբ Մեսրոփը դարձարուր 'ի Բիւզանդիոնէ՝ թագաւորն և իսկոյն ընդ առաջ գացին նմա. նոյնը կ'ըսուի և առ Ագաթանգեղ վասն Գրիգորի՝ որուն կը դիմաւորեն թագաւորն և մեծամեծք: Բայց վերջինս որքան որ դիւրահասկանալի և բնական է նկատմամբ խոստովանող վկային և մեծի քահանայապետին, նոյնքան ևս առաջինը չափազանց և անբնական կը տեսնուի սոսկ վարդապետի մի համար: Այսպէս դարձեալ առ Կորեան յէջ 13 հետեւեալ բացատրութիւնը. « Քանզի յԱյրարատեան գաւառին 'ի կայս թագաւորացն և քահանայապետաց, բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ », կը գտնենք նոյնպէս և առ Ագաթանգեղ, բայց բացառութեամբ՝ քառանկալապետաց բառին, զի Այրարատ գաւառը Գրիգորէն առաջ ուրիշ կաթողիկոսաց կայան չեղած երբէք: Արդ այս աւելի կը պատշաճի Տրդատայ և Գրիգորի ձեռքով քրիստոնէութեան 'ի Հայս մատուց գտնելուն, քան մեսրոփեան նշանագրոց գիւտին, թէպէտեւ կ'արդարանայ Կորիւն « քահանայապետաց » յաւելուածովը: Իսկ երրորդ դիտողութեան օրինակ է ասացեալն առ Ագաթանգեղ յէջ 582, « Առաւել զաշակերտութիւն նորագիւտ վարդապետութիւնն 'ի Հայս և թէ նշանագրոց ուսումը: Այսպէս նաև « Հրաւառեալ » շնորհագիւտ պարգևելոքն » բացատրութեամբ, որ կը գտնուի Ագաթանգեղայ 606 իշում և Կորեան յէջ 10, կը հասկացուին թէ՛ Յովհ. Կարապետի և Աթանագիւնեայ ընծայուած նշխարքը և

թէ Թէոդոս կայսեր առ Ս. Մեսրոփ տուած պարգևներն և հրա-
մանը:

Արդ այս և այսպիսի դեռ ուրիշ պարագաներ դիտելով՝ չեմ տա-
րակուսիր բնաւ եզրակացնել, թէ Ագաթանգեղոյ գրոց մէջ արդէն
կը գտնուէին բոլոր վերոյիշեալ հատուածներն՝ որոց մասին է խնդիրս,
բազում մամբ իսկ յառաջ քան զգրութիւն պատմաբան Ս. Մեսրոփ-
բայ՝ ի ձեռն կորեան. և թէ կորին անտի առաւ ապա ոչ իբրեւ օտա-
րին ինչ, այլ իբրեւ իւր ինչ սեփական և ներմուծեց իւր երկասիրու-
թեան մէջ, մասնաւոր իմն նպատակաւ: Եւ յիրաւի, այսպիսի մի
եղելութեան կան բազմաթիւ ապացոյցներ, բայց ես հետեւեալները
բաւական կը համարիմ մէջ բերել: Ա. Այն ժամանակ միայն կարեւի էր
Ագաթանգեղոյ գրոց հեղինակը՝ բանաբաղ համարել կորեան, եթէ
ստուգիւ կորին, ինչպէս որ իւր վերջաբանին մէջ կը խոստանայ,
նոյնպէս ևս առանց ուրիշն օգտուելու և յինքնէն յօրինած ըլլար
Ս. Մեսրոփայ սոյն պատմութիւնը: Բայց որովհետեւ մենք յայտնապէս
կը տեսնենք, որ ինչպէս Ագաթանգեղոյ՝ այսպէս ևս ՚ի փ. Բուզան-
դացոյ քաղուածոյ հատուածներ՝ կը գտնուին անդ բառ առ բառ.
ուրեմն պէտք է կամ զփաւստոս ևս բանաբաղ համարել կորեան, և
կամ ըսել, թէ կորին ինչպէս բանաբաղ է փաւստոսի՝ նոյնպէս
ևս եղած է Ագաթանգեղոյ գրոց: Բ. ինչպէս առ կորեան, այսպէս
նաև առ փաւստոսի կը գտնուին տեղիք բազումք Գրիգորի վերաբե-
րեալ իրաց և նորա յաջորդաց մասին, որոնք ՚ի բազում ուրեք գրե-
թէ բառ առ բառ, և այլուր մանր պարագաներով Ագաթանգեղոսէն
առնուած են: Թողլով այս տեղեաց բաղդատութիւնն այլում պատեհի՝
զայս միայն կը ծանուցանեմ՝ աստ, թէ այս իրողութիւնս Ագաթան-
գեղոյ գրոց առաջնութեան մասին եղած սովն տարակոյս ՚ի բաց
բառնայ, որովհետեւ Բուզանդացին շատ անգամ կից ընդ յիշատա-
կութեանց ՚ի մէջ բերելոց՝ կը ծանուցանէ մեզ զնախագոյութիւն-
աղբերաց նոցին, լռելով զանունն: Գ. Այն տեղիքը՝ զորս ՚ի մէջ բերե-
ք Բուզանդ, յայտնապէս նոյն են ընդ Ագաթանգեղոսն տեղեաց, բայց
շարադրութեամբ կը տարբերին ՚ի սոցանէ, որ յայտնի ապացոյց

1. Արգարե կորեան 2, 3, 4 և 5 էջերում՝ աստուածաբաւ և առաքինի արանց
վայոյնեան հատուածները՝ բառակաւ քաղուածոյք են Փաւստոսի Գ. Գիրք. Գ զԷԼ
խոյն (էջ 77-78) եղած պարբերութեանց: Եւ յէջ 11 այս հատուածս « Եւ ոչ մեծն
Մովսէս զուարճանայր յէջնս սինէական լիբին, և այլն », փոխ առնուած է Փաւստոսի
Գ. Գիրք. Ժ գլխէն. և զասացեալն վասն Ս. Յակ. Մծբնացոյ և վասն հատորի
Նոյեան տապանին. յարմարցուցեր է կորին Ս. Մեսրոփայ և մեսրոփեան նշանա-
գրոցն զոր երեք ՚ի Հայս:

2. Մասնաւորապէս մեծին Ներսիսի վարուց և գործոց մասին՝ զորս համանման
գործոց նախահօրն իւրոյ մեծի լուսաւորչին կը նկարագրէ:

3. Սրինակ մի միայն մէջ բերեալ աստ. Գ. Գիրք. Գ գլխոյն մէջ Արթանէսի համար
կըսէ. « Սա երթեալ կատարէր անդ (Յաշափշատ Տարսնոյ) ըստ շահապաղ սովորու-
թեան գճեառն զխաղաղական զփրկութեան զպատարագն զոհոսրեան զնադրագործին »

է ըստ իս, թէ Ագաթանգեղոյ յոյն բնագիրը միայն կը ճանչնար Բու-
ղանդացին, և թէ իւր գրուածքը յունարէն գրեց, իսկ Կորինն յերկա-
քանիւրէն իսկ հայերէն թարգմանութեամբ օգտուած է, որոնք
հաւանութիւնն սքանչելանուն հեղինակիս ուղղութեանը ներքեւ՝ բայց
տարբեր թարգմանչաց ձեռքով եղած պիտի լինին, Երուսի, Ագաթան-
գեղոյ թարգմանութիւնն՝ իւր ոճոյ առանձնայատկութեամբք հան-
դերձ՝ ունի դարձեալ բազում ինչ նմանութիւնս բանից, ոճերու և
ձևոց, որոնք հասարակ են փաւստոսի և Կորեան։ Այս բաներուս
քննութիւնը Ագաթանգեղոսի թարգմանութեան վրայ խօսած ժա-
մանակ կը յուսամ բարգաւաճել։

Գ. Կորեան և Ագաթանգեղոյ վերոյիշեալ ամբողջական հատուած-
ներէն դուրս, կը տեսնուին դարձեալ ստեպ ստեպ կէս տողով, եր-
բեմն միատող և երբեմն երկտողեան բազմաթիւ հատուածներ և
բացատրութիւններ ևս, զորս չէ մարթ դիտմամբ նոցա միոյն ի միւսոյ
անտի քաղուած համարել։ Այս երևոյթս ևս ուղղակի եղծիչ կը հա-
մարիմ Գուռչմիդի այն կարծեաց, թէ Կորիննէն փոխ առնուած հա-
տուածներն Ագաթանգեղոյ գրոց մէջ՝ Գրիգորի կենսագրութեան
հնագոյն հատուածներուն մէջ ներմուծուած և ընդհատուած են։ Արդ
այս պարագայիս մէջ ընդհակառակն, հնագոյն կարծուած հատուած-
քնն անգամ կը պարունակեն նորագոյն կայծուածներուն բացա-
տրութիւններն, մերթ ալ նորագոյնքն՝ կ'ընծայեն մեզ ինչ ինչ ի
հնագունից անտի. ուրեմն պէտք է մի այլ բնական և բացատրիչ
պատճառ որոնել այս երևոյթիս։ Ե. Կորին գրեց զպատմութիւն Ս.
Մեսրոպայ յամի Տեսուն 445—450 յետ 10 ամաց մահուան վարդա-
պետին իւրոյ. իսկ Ագաթանգեղոսեան գրոց թարգմանութիւնն և
խմբագրութիւնն եղաւ, ընդհակառակն, Ս. Գրոց Ա. թարգմանու-
թենէն քիչ յետոյ և առ կենդանութեամբ սրբոցն Մեսրոպայ և
Սահակայ, եւ յիւրաւի, այս բանիս յայտնի ապացոյց կը համարիմ
ես նոխ այս երանաշնորհ հարցս պաշտօնական թղթերն՝ ուղղեալ
առ սուրբ եպիսկոպոսունս Յունաց Պրակի, և Ալիակիոս, յորս Գրի-
գորի կենսագրութենէն վարդապետական տեղիքն մէջ բերուած են,

յարարտեաց յիշատակի զկենդանարարն և զագառնից զմարմին և զայիւն Աստուած.
որդւոյն Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Նոյնը կ'ըսուի և առ Ագաթանգեղոյ յէջ
610 վասն Գրիգորի այսպէս. «Մատուցաներ զպատարագն փրկութեան, և բաշխեց
զմարմին և զարիւն կենարա-ին Քրիստոսի»։ և յէջ 622. «Եւ անդ մատուցաներ
զօրհնութեան պատարագն, հաղորդէր զամենեւնսն ի խորհուրդն Սրբութեան, յայնքա
ամենեցուն զսուրբ մարմին և զպատուական արիւնն ամենափրկիչին Քրիստոսի զկեն-
դանարարն և զի՝ ցուցիլն ամենայն մարդկան և զարարիլն և զայնարհագործն զաստուած
Ժառոռը շնորհն առ ամենեւեան»։

1. Սոփ. Հայկ. հա. Բ. էջ 137.

2. Երուսի յէջ 148 վերոյիշեալ Սոփերաց հատորին կ'ըսուի. «Եւ որ ի փայտէն
գայթակզուիւն եղև ի գրախտին, ի մէջ միջնաժողով ժողովբոց զիսն կանգնեաց,
փայտ առ փայտ և ծառ առ ծառ, և զպտուղն կենաց փոխանակ ապականացու

Ջ. Յայլում՝ վաւերական թղթի՝ Ս. Սահակայ կը գտնուին դարձեալ Ագաթանգեղայ գրոց 610 և 624 էջերէն կրկին հատուածներ, գրեթէ բառ առ բառ: Է. Մ. Խորենացոյ Հոփփսմանց Ներբողին մէջ ևս, զոր գրեց առ կենդանութեամբ Ս. Մեսրոպայ, կը գտնենք 'ի գրոց աստի Ագաթանգեղայ տեղիս տեղիս ոչ սակաւս, զորս յայլում վայրի առիթ պիտի ունենամ ամբել 'ի համեմատութիւն. ունիմ և այլ փաստս, զորս ուրիշ առթիւ 'ի մէջ պիտի բերեմ:

Արդ եթէ ստուգիւ կորիւնն է բանաքաղ, ինչպէս որ ըստ բաւականի կը հաստատեն սոյն ընծայութիւնքս, այժմ սոյն հարցս ընդ առաջ կ'ենլէ մեզ. Ինչ կերպով արդեօք և ինչպիսի պարագայից մէջ եղաւ կորիւն բանաքաղ վերոյգրեալ հատուածոց, իյնէ մարթ Ագաթանգեղայ գրոց հանապազորդ ընթերցման կամ ծառայակոտ նմանութեան արգասիք համարել զայնս: Այս բանս անկարելի չէ, ըստ ինքեան, սակայն իրք այլազգ ամենեւին տեղի ունեցած են, զորս Գուտշմիդ բնաւ չանդրադարձաւ և չանդրադարձոյց, որովհետեւ նա զհայերէնը բնագիր կը կարծէր: Ուստի այս խորհրդաւոր պատճառս՝ որ միայն կարէ բնական կերպով լուծումն տալ բանաքաղութեան բազմակնճիւն խնդրոյն, և պարզել իրաց վիճակն՝ ըստ իմ կարծեաց, է հետեւեալն. Կորիւն է նա ինքն խմբագրող և գլխաւոր քարգմաւնի Ագաթանգեղոսեան գրոց, ունելով ինքեան գործակից զհոշակեալն 'ի գիր և 'ի բան զաշակերտակիցն իւր զԵղնիկ Կողբացի: Երկրորդ, 'ի խմբագրելի գգիրս Ագաթանգեղոս, նա յօրինեց զԹաւաշարան նորին և զվերջարան, հաւանօրէն նա ինքն քարգմանեց զԲ. գիրքն Ագաթանգեղայ և վերոյիշեալ հատուածներն կամ քարգմանաբար ընդարձակեց և ձեռի վրայ դրաւ, և կամ, թուրքովի իրմէ գրեց և ներմուծեց անդ, հաստատուելով Գրիգորի կենսաւ գրութեան այլ և այլ ակնարկութեանց և Հայաստանի կենդանի աշակերտութեանց վրայ, — Սակայն յետ ամաց ինչ անցելոց երբ Ս. Մեսրոպայ պատմութիւնն սկսաւ գրել, այնու բնական կերպով, որ չէ հաջողագիւտ ինչ, զի կը գտնենք և առ այլ մատենագիրս և թարգմանիչս, մի և նոյն տեղիքն, ոճերն, և բացատրութիւններն և լեզուն զոր 'ի վար արկեալ էր կանխաւ Ագաթանգեղոսի թարգմանութեան մէջ, մոտոց նաև 'ի պատմութեան անդ Ս. Մեսրոպայ:

պտղուն զկենդանաբեր փայտէն կախեաց, կամք կամակարուծեամբ և ոչ ակամայ, կամք զանձն մասնեաց, ինքն զինքն եզ, և անգրէն զինքն ընկալաւ, զսուրբ մարմինն և զպատուական արիւնն պաշար կենաց մեզ, որք ճշմարտութեամբ հաւատացաք, յաստիճանաւոր Զանապարհն որ յերկինսն է՝ սիրելեաց իւրոց պատրաստեաց: Այս հատուածս ընդգլխումն է Ագաթանգեղայ 71 և 72 էջերուն և ուրեք բառ առ բառ:

1. Սոփ. Հայկ. հտ. Բ. յէջ 127, 128, 129 և 130.

2. Այս բանս Ագաթանգեղայ գրոց խմբագրութեան և թարգմանութեան գլխոյն մէջ պիտի բարգաւաճեմ և պարզեմ:

Իսկ բուն պատճառն՝ որով կորին առաւ վերստին յԱգաթանգեղայ գրքէն իւր նախագրեալ հատուածներն և ներմուծեց Ս. Մեսրոպայ պատմութեանը մէջ, եղած են մէկ կողմէն այն համաձայնակի պէպքն և իրք, այսինքն է Աւետարանի քարոզութիւնն և հեթանոսազանդ ժողովրդեան դիմաց գործուած պանշիքն, որք վերստին կատարուեցան յաւուրս Ս. Մեսրոպայ և 'ի ձեռն Մեսրոպայ' Հայաստանի սահմաններուն վրայ, յետ 70 ամաց Մեծի Լուսաւորչին: Իսկ միւս կողմէն ալ երկրորդ լուսաւորչին մերոյ Ս. Մեսրոպայ առաքելաշնորհ կենցաղն և զարմանազորութիւններն յաշխարհս Հայոց, Վրաց և Աղուանից: Իսկ որովհետեւ նմանազոր իրողութիւնք՝ նոյնանման նկարագիր ևս կը պահանջեն. ուստի Ս. Մեսրոպայ կենաց և գործոց հեղինակն իրեն մասնաւոր նպատակ դրած է Հայոց գրպութեան հեղինակին, երկրորդ լուսաւորչին, նորա լուսաւոր վարդապետութեան և հրեշտակակրօն վարուց ճշգրիտ գուգակչիւնն ընել, ընդ վարուց և գործոց առաջին Լուսաւորչին Գրիգորի, ինչպէս ըրաւ փաւստոս թաղբատութեամբ վարուց և գործոց Մեծին Ներսիսի:

1. Մ. Խորենացին իսկ իւրեք Կորեան բանաբաղ լինելու պատճառը կու տայ մեզ Գ. Է. Խ. զի իրիւս ականատես և ականջաւոր պատմելով Ս. Մեսրոպայ քարոզութիւնն 'ի Գողթան գաւառի, Տրդատայ ժամանակէն հան մնացած հեթանոսական ազանդին բարձումն և նորա ձգնողական վարքը, կը յաւելու անդէն. « Ուր նշանք սատուածայինք յինչին՝ որպէս առ սրբոյն Գրիգորիս. հաշտական լեռն զեք մարմնաւոր տեսչամբ՝ անկանէին 'ի կողմանս Մարաց: Ուղղակի Կորեանն ևս առած է Մովսէս այս տեղիս, բայց էր յիշէ առ նմին զԱգաթանգեղայն»:

2. Արգարեւ, այս բանս Կորեան ինքնին կը վկայէ յերկասիրութեան իւրում կամ Յառաջաբանի անդ պատմութեան Մեսրոպայ յասելն այսպէս. « Վասն նորին լուսաւոր վարդապետութեան և հրեշտակաբար կրօնիցն առաքինութեան զմտառածելով՝ գիշատակարանս առանձինն մատուանշաւ ծաղկեցուցանել, Յէշ 2. « Ոչ 'ի մէջ աւրուեստակեալ՝ մերոյն կարծեց վիճարանելով, այլ յորինակացն տունից զընդդիմակացն բարձրացուցանել»: Եւ յէջ 11. Մովսիսի սինէական լեռնէն պատգամաբար իջումը Ս. Մեսրոպայ մարտնչելով կ'ըսէ. « Իսկ այսր երանելոյ՝ վասն որոյ ձառնադրս յարդարին»: Եւ հուսկ 'ի վերջաբանի անդ որոշակի կ'ըսէ. « Եւ 'ի նշանադիմակացն քաղելով՝ զմատուտոյն կարգեցաք, որք ոչ միայն մեզ, այլ և որ զմատուանս ընդմեջուն յայտնի է»:

3. Զի Դ. Դպրութեան Դ զլիւռն մէջ, Ս. Ներսիսի ընտրութեան, երթին 'ի ցաւորիս, ձեռնադրութեան, փառաւոր դարձին և ընդունելութեան, եկեղեցեանք ևս բարեկարգութեանց, յուշարէն և ասորի գայրոցաց հաստատութեան, հրեշտակակրօն միտատանից հիմնարկութեան, աղքատաց և պարտատեաց մուրհակները պատուելուն, և նորա վարդապետութեան և զարմանաբան ձգնութեան նկարագիրն համաձայն Ագաթանգեղայ կ'ընէ. հուսկ 'ի վախճանի այսպիսի եղելութեան բուն պատճառն ևս կը զնէ անդ յասելն. « Զի 'ի վարս կարաց զմացից իւրոց՝ նմանեաց իւրոյ ձորն մեծին Գրիգորի, արգարեւ հայրաբարոյ գասնէր ամենաբարի գնոյն հարցն նարոցաց զասաքնիւնորին նոյն գոյժ երևեալ»: Արգ. էթէ բարեբաղգաբար գանուէին Ագաթանգեղայ և փաւստոսի պատմադրութեանց յայն բնագրերն, ճիշդ մի և նոյն երևոյթը պիտի տեսնէինք նաև առ Բուգանդայ այս հաստատանոյ մասին, ինչ որ կը տեսնենք առ Կորեան վերոյիշեալ տեղեաց նկատմամբ: Բայց դիտելի է որ փաւստոսի թարգմանիչը կամ ձեռք խառնող օմն՝ այնպէս չապշիւր է իւր լեզուին ու ժողովրդական բարձրաւոյն գտնածերն, որով հեռացած է յԱգաթանգեղայ:

Սակայն հանդերձ այսու պէտք է ըսել, թէ ինչպէս փառաբանի զուգակշիռ տեղեաց մէջ՝ այսպէս նաև առ Կորնեան, ուրոյն առանձին բնագրոյն պահուած է միշտ անկախ յԱգաթանգեղայ, նկատմամբ անուանց, տեղեաց և անձանց. և ժամանակագրական և պատմական գէպք անգամ երբեմն նոր յաւելուածներով և երբեմն ալ յապաւմամբ՝ իբր 'ի փակագծի նշանակուած են, որոնք միոյն կամ միւսներուն միայն յատուկ էին։ Այսպէս ուրեմն իրաւամբ և առանց խաբէութեան ստուեր մի ձգելու իւր անձին և գրութեան վրայ, կարէր քաջ հաւատարիմ և սքանչելի Կորին գոչել 'ի լուր ժամանակակցացն և ապագայից, թէ զանոնք՝ Ոչ եթէ 'ի հին համբաւուց տեղեկացեալ, այլ որոց ինքն ականատես եղած էր գրեց. այնու զի պատմութիւնը բառից կամ շարագրութեան կիրառութեան մէջ կայացած չէ, այլ իրաց զիպաց և անուանց և պարագայից աւանգութեանը մէջ, զորս ևս տեսած էր և լսած։ Իսկ ես կարեմ զայս գնել վախճան բանիցս, թէ Կորին այսու եղանակաւ է բանաբաղ ինքեան, և թէ Կորին հաւասարապէս մեծ է 'ի գիրս Ագաթանգեղ, որպէս 'ի Պատմութեան անդ Ս. Մեթրովբայ. իսկ ապագայք ինչպէս կուզեն թող դատեն զնա։

Հ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳՍԵԱՆ

Ն Ա ի Կ Ի Ն

ԱԶԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՐՍԱՆԵԱՅ

Մեր ազգային ձեռագիրներէն միոյն մէջ հայկական ՌԻՄԹ թուականաւ, Ամուսնութեան խորհրդոյն վրայ գրուած ճառ մը գտանք. յորում հեղինակն, որ կ'ենթադրուի ըլլալ Տաթևային և կամ նորա ժամանակակից անձ մը, մի առ մի նշանակեր է իւր ժամանակին եղած հարսանեաց հանդիսին ամենայն եկեղեցական և ընտանեկան սովորութիւնքը. յորմէ քաղելով ընտրանք սոյն պատառիկս՝ կը հրատարակեմք զայն յընթերցումն մերազնեայ բանասիրաց։ Անոր մէջ հեղինակն իւրաքանչիւր սովորութեանց մեկնութիւնքը կը գնէ առանձինն, որոց 'ի հաստատութիւն՝ վկայութիւններ և օրինակներ մէջ կը բերէ 'ի Ս. Գրոց, զորս աւելորդ համարելով՝ զանց ըրինք մի առ մի կարգել աստ։

Արդ նախ սովորութիւն է ազգաց, փեսային խնդրել հարսն և կրկին կերպիւ ընտրեն. նախ իւրեանց հաւատոյն, թէ հայ քրիստոնեայ է և թէ այլ քրիստոնեայք. և ապա 'ի մէջ նոցա՝ յընտիր և պատուական ազգէ մեծուտանց և յազատաց, զի գոն աղքատ և գռնհիկ Հայք։